

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2020 թ. սեպտեմբերի 18-ին կայացած թիվ 1 նիստի

Գիտական խորհրդի 41 անդամներից նիստին մասնակցել են 32-ը:

1. Կենսաբանության ֆակուլտետի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների ամփոփիչ հաշվետվության հարցը:
2. ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի հայտարարած «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2019» մրցույթին մասնակից թեմաների ընթացիկ հաշվետվությունների հարցը:
3. Առկա ասպիրանտ և հայցորդ ձևակերպելու համար երաշխավորության, թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:
4. Դոցենտի գիտական կոչման շնորհման հարցը:
5. Անվանական կրթաթոշակների շնորհման հարցը:
6. Ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակման հարցը:
7. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ՝ Կենսաբանության ֆակուլտետի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների ամփոփիչ հաշվետվության հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ., պրոֆեսոր Ա.Հ. Թռչունյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Պ.Հ. Վարդևանյանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ., պրոֆեսոր Ս.Գ. Նանագյուլյանը, գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Ս. Հարությունյանը, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, կ.գ.թ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Կենսաբանության ֆակուլտետի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների օրացուցային պլանով նախատեսված աշխատանքները համարել ավարտված:

- Թեմա՝ «Հայաստանի պահպանվող տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգային ծրագրերի իրականացման համար կենսացուցիչների որոշում»: Ղեկավար՝ Նանագյուլյան Սիրանուշ Գերասիմի:

- Թեմա՝ «Օրգանական թափոններից դեպի կենսաջրածին. Թափոնների նախամշակումը և մանրէներում H₂-ի արտադրության խթանման գործընթացների կարգավորումը»: Ղեկավար՝ Թոչունյան Արմեն Համբարձումի:
- Թեմա՝ «Արքեաների կենսաբազմազանությունը և էկոլոգիական գործառույթը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի երկրաջերմային աղբյուրներում»: Ղեկավար՝ Փանոսյան Հովիկ Հարությունի:
- Թեմա՝ «CRISPR-Cas9 գենոմի խմբագրման տեխնոլոգիայի մշակումը հակաքաղցկեղային դեղամիջոցների նկատմամբ քաղցկեղային բջիջների զգայնության բարձրացման նպատակով»: Ղեկավար՝ Հովհաննիսյան Գալինա Գեորգիի:
- Թեմա՝ «Արարատյան դաշտում ստորերկրյա ջրերի որակի և հողերի աղակալման վրա դրանց ազդեցության գնահատումը ոռոգման ջրերի որակի ցուցանիշի (IWQI) և երկրավիճակագրական մեթոդների կիրառմամբ»: Ղեկավար՝ Ղազարյան Կարեն Արամայիսի:
- Թեմա՝ «Գենասենսորի ազդանշանի փոփոխության վրա լիզանդի ազդեցության ուսումնասիրությունը»: Ղեկավար՝ Վարդևանյան Պողոս Հովհաննեսի:
- Թեմա՝ «Հակառուռոցքային դեղամիջոցների արդյունավետության բարձրացման քրոմատին-կախյալ ուղու առանցքային ֆերմենտների ակտիվության կարգավորումը»: Ղեկավար՝ Արծրունի Իրինա Գեղամի:

ԼՍԵՑԻՆ՝ ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի հայտարարած «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2019» մրցույթին մասնակից թեմաների ընթացիկ հաշվետվությունների հարցը:

- Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, Կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանության» ԳՀ ինստիտուտի գիտաշխատող, կ.գ.դ. Կարեն Արմենի Թոչունյանի «Պրոտոնային ԱԵՖ-ազի և մրջնաթթու ջրածին լիազի ներթաղանթային փոխազդեցության կարգավորման մեխանիզմները»:
- Կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանության» ԳՀ ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, կ.գ.թ. Նիկոլայ Վլադիմիրի Ավթանդիլյանի «Հայկական դեղաբույսերի լուծամզվածքների հակաքաղցկեղային ներուժը և քիմիաթերապևտիկ դեղամիջոցների հետ սիներգիկ փոխազդեցությունների բացահայտումը՝ մարդու քաղցկեղային բջջային գծերում»:
- Կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանության» ԳՀ ինստիտուտի գիտաշխատող, կ.գ.թ. Լիլիթ Յուրիկի Հակոբյանի «Արդյունաբերական թափոնների օգտագործման հեռանկարները՝ մթնային և լուսային խմորում իրականացնող բակտերիաների խառը կուլտուրաների կիրառմամբ»:
- Կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանության» ԳՀ ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, կ.գ.թ. Արմինե Արմենի Մարգարյանի «Հայաստանի հանքապարներում մանրէային համակեցությունները՝ որպես կենսավերականգնման հեռանկարային միջոցներ»:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, կ.գ.դ., պրոֆեսոր Ա.Հ. Թռչունյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, «Կենսաբանության» ԳՀ ինստիտուտի գիտաշխատող, կ.գ.դ. Կարեն Արմենի Թռչունյանը, «Կենսաբանության» ԳՀ ինստիտուտի գիտաշխատող, կ.գ.թ. Լիլիթ Յուրիկի Հակոբյանը, «Կենսաբանության» ԳՀ ինստիտուտի կրտսեր գիտաշխատողներ, կ.գ.թ. Նիկոլայ Վլադիմիրի Ավթանդիլյանը և կ.գ.թ. Արմինե Արմենի Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել վերոնշյալ թեմաների հետագա ֆինանսավորումը:

ԼՍԵՑԻՆ՝ Առկա ասպիրանտ և հայցորդ ձևակերպելու համար երաշխավորության, թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:

- ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առկա ասպիրանտ Անահիտ Համբարձումի Շիրվանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:
- Դիագեն պլուս լաբորատորիայի բժիշկ-լաբորանտ, կենսաֆիզիկայի ամբիոնի հայցորդ Նարա Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ., պրոֆեսոր Ա.Հ. Թռչունյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Պ.Հ. Վարդևանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել Անահիտ Շիրվանյանի թեկնածուական ատենախոսության թեման «Որոշ խմորասնկերի աճի և հակաօքսիդանտային ֆերմենտների ակտիվության վրա սթրեսային գործոնների ազդեցության մեխանիզմները» Գ.00.04 կենսաքիմիա մասնագիտությամբ և գիտական ղեկավար հաստատել ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ. պրոֆեսոր Ա. Հ. Թռչունյանին: Հաստատել Նարա Պետրոսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Միջմոլեկուլային փոխազդեցությունների ներգործությունը կենսապոլիմերների հետ փոքր մոլեկուլների կապման ուժի վրա» Գ.00.02 «Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ և գիտական ղեկավար հաստատել կ.գ.դ., պրոֆեսոր Պ.Հ. Վարդևանյանին:

ԼՍԵՑԻՆ՝ Գենետիկայի և բջջանանության ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ.՝ Տիգրան Աշոտի Հարությունյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Ֆ.Դ. Դանիելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել գենետիկայի և բջջանանության ամբիոնի ասիստենտ, կ.գ.թ.՝ Տիգրան Աշոտի Հարությունյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

ԼՍԵՑԻՆ՝ Լևոն Օրբելու և Նորայր Միսակյանի անվան անվանական կրթաթոշակների շնորհման հարցը:

ԵԼՈՒՑԹ ՌԻՆԵՑԱՎ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով բարձր առաջադիմությունը և ակտիվ մասնակցությունը գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին՝

Նորայր Միսակյանի անվան կրթաթոշակը շարունակել հատկացնել կենսաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի Սաթենիկ Մխիթարի Խալաթյանին, իսկ Լևոն Օրբելու անվան կրթաթոշակը հատկացնել կենսաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողուհի Տաթևիկ Արսենի Ստեփանյանին:


ԼՍԵՑԻՆ՝ Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի աշխատակիցների կողմից ներկայացված 2 ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս.Գևորգյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, կ.գ.դ., պրոֆեսոր Ա.Հ. Թոչունյանը: Ներկայացվեցին Ն.Կ. Հայրապետյանի, Ա.Հ. Թոչունյանի «Կենսաքիմիայի վարժություններ և առաջադրանքեր» (մաս 1-ին) և Կ.Ա. Թոչունյանի, Հ.Խ. Գևորգյանի, Լ.Ա. Կարապետյանի «Մանրէների կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա» ուսումնամեթոդական ձեռնարկները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել «Կենսաքիմիայի վարժություններ և առաջադրանքեր» (մաս 1-ին) և «Մանրէների կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա» ուսումնամեթոդական ձեռնարկները հրատարակման:

Գիտական խորհրդի նախագահ՝

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.



Է.Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝
դոցենտ՝



Ի.Վ. Շահազիզյան